

եւ ատեն կլինի որ մարդ կտարակուսի Թէ արդեօք աւելի լաւ չէ՞ պարզ շիտակ մտածութենէ կախում ունենալ, եւ Փաշայի մը կամ գաւթի մը հասոյիցը հնազանդիլ՝ բան Թէ մեր դատաստանական ձեւերուն բարակութիւնները, արգելքները եւ մանաւանդ դանդաղութիւնները:

Խօսքերնիս սահմանադրութեանց վրայ դարձնելով, ամենէն բնական եւ գուցէ ամենէն պատուականը այն սահմանադրութիւնն է որ այս չորս սկզբանց վրայ հիմնուած լինի. ա) ժողովուրդը ինքն ընտրէ իւր երեսփոխանները. բ) Այն երեսփոխաններն ընտրեն իրենց գլխաւորները. գ) Այն երկու ժողովներն իմիասին ամէն իշխանութիւն ունենան, միայն Թէ չկարենան առաջնոյն ընտրութեան կերպը փոխել. եւ դ) Հասարակաց կամքը լինի ամէն տեսակ վէճերու վերջին լուծմունքը տուողը: — Մանր պարագաները իրենք իրենցմէ կտեղաւորուին այս սահմանադրական բառակուսւոյն մէջ:

Մէկ բան մը կայ որ օրէնսդիրը ոչ երբէք պէտք է մոռնայ, այսինքն մարդկանց տկարութիւնն ու չարամտութիւնը: — Այն օրէնսդիրն որ միտքը դրած է Թէ մարդիկ ամէնքն ալ բարեսիրտ, անշահասէր ու խօսք հասկըցող են, այն ճարտարապետին կնամանի որ աւագէ կամ ցելիէ հիման վրայ հոյակապ շէնք մը կբարձրացնէ: — Մի՛ պահանջեր որ սողունը վագէ, եղնիկը Թռչի, եւ կամ հասարակ մարդիկ փիլիսո-

փայի պէս մտածեն ու շարժին:

Այդ սխալմունքն ըրած են շատ անգամ շատ հին եւ նոր քաղաքագէտներ, այնպիսի օրէնքներ սահմանելով որ ճիշդ կատարելու համար կամ հրեշտակ պէտք է լինել եւ կամ իմաստուն. եւ ո՞վ չգիտեր որ մեր մէջ իմաստուններն ալ նոյնչափ սակաւագիւտ են՝ որչափ հրեշտակները: Խիստ շատ բան կայ որ ըստ ինքեան զարմանալի է, բայց իրօք անկարելի: Այս բանիս վրայ բաղադրական աչք մը ձգելը այնպիսի նայուածքի կնամանի որով մարդ ընդարձակ դաշտերու վրայ կնայի. հեռուի դաշտերը շիտակ կերեւան, եւ կարծես Թէ հեռուն դիտած նպատակիդ շիտակ հասնելու համար ամենեւին արգելք ընող բան մը չկայ. բայց քանի որ առաջ երթաս՝ փոսեր, լիճեր, ճահիճներ, քարաժայռեր կեննան առջեւդ ու արգելք կլինին, կամ գէթ չեն Թողուր որ շիտակ երթաս նպատակիդ: Փառք տուր Թէ որ գիշերը վրայ չհասնի, եւ Թէ որ դուն ուժէ չընկնիս բոլորովին: Դիտած նպատակդ միայն երեք մղոն հեռու կերեւար, բայց ճամբան տասուերկու մղոն է եղեր, գուցէ եւ աւելի:

Այսու ամենայնիւ միշտ օգտակար է ցուցնել մարդկանց ընկերական ճշմարիտ սկզբունքները: Եթէ չկարենան բոլորովին հնազանդիլ անոնց, գէթ կրնան մօտենալ:

ՏԸ ՂԵՒՍ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

ԻԴԱՒԱՌԻՆ ՔԵՐՍՈՆԻ, ԻՊԵՍԱՐԱՊԻԱ ԵՒ ԻՓՈՏՈՒԱ.

(Շարայարութիւն եւ վերջ.)

Քիչ մ'առաջ գնալով մտանք Գրիգորապօլի անտառ, որ քառական զուարճալի է: Հոգեօրականը Լուսաւորչի եկեղեցւոյ դուռը հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տուին. վերջը չնորհափայլ Տէր Դանիթ քահանայն ծաշինեանց կարդաց իղիմաց Հոգեօրականաց եւ ժողովրդականաց համառօտ եւ զեղեցիկ ձառ՝ որով եւ հանդէսը վերջացաւ, եւ Սրբազան Այցելուն առանձնացաւ իրեն համար պատրաստած բնակութիւնը ազնուական Աղա Յովնանէս Աստուածատրեան Սարեանի տունը, ուր տեղ ներկայացաւ Քաղաքապետն եւ բոլոր երեսիք քաղաքին: — Այս քաղաքը Խերսոնի համանգական քաղաքն է, որուն մէկ կողմէն ալ կանցնի Զորնայ գետակը, որուն անոռնովք քաղաքին հին անունն էր Զօնայ: — Տնկերայի եզերքը ունի երեք եկե-

ղեցի 2685 բնակիչ կամ 585 տունք, որոց երկու եկեղեցիքն են Հայոց, եւ Հայք են մինչեւ ուր հարիւր հօգի, կամ 480 գերդաստան: Հայք ունին առանձին Ազգային դպրոց որուն մէջ եւ անգղաւորամբ Մօլտաւանի որդիք եւս ընդունելով՝ իսպառ յետ էր մնացած հայերէն լեզուն, որ առաջին անհրամշտ հարկատուութիւնն է քաղաքին. ըստ որում այս տեղ Հայք տանկերէն կիսօին:

Երջանկալիշատակ Յովսէփ Կարողիկուն Արդուրեանց՝ Իզմայիլ Ռաշթով քաղաքներէն բերել է այս տեղ գաղթական ուր հարիւր գերդաստան Հայ եւ ապա բառականաբար եւս ժողովրդն են Քելիքն եւ Գովշանէն, այնպէս որ մի հասարակութիւն են կազմեր. եւ ինքն հիմն դրել է այս քաղաքս, եւ յանձնել է Հայաստանեայց սուրբ Լուսաւորչի պաշտպա-

նուրեանը, որուն անուամբն կառուցեր է մեծ եկեղեցին եւ նորա խնդրանքը Տերութիւնը անուանել է զայն *Գրիգոր-յ/իսայօրիս*: Կան եւ երկու կամ երեք եկեղեցեաց աւերակներ որոց մինն է հրապարակին մէջ, վանդակապատ բարձ, եւ մէջը խաչ մը կանգնած. եւ ըստ այսմ երկու եկեղեցեաց շինութիւնն եւս ժամանակակից է իրենց գաղարականութեան, այն է 1792-ին: Միայն կարդացի այս եկեղեցեաց պարսպաց մէջ մէկ քանի մանարձաններ հին բուով, որոց համար ասացին ժողովուրդը թէ այն քարերն զաղբականութեան ժամանակ բերած են այն տեղ իշխատակ իրենց նախնեաց Մեծամեծ բարերարութիւն վայելած է այս քաղաքը, ինչպէս Յովսէփ սրբազանին նմանապէս եւ Գրիգոր Արքեպիսկոպոսին անխնջ հոգացողութեամբը շատ արտօնութիւններ 30,000 տեսնարին հող պարզեալ է նոցա Պողոս կայսրը: Հայք ունին առանձին ազգային Գատարան. բայց ափսոս որ անհոգութեամբ եւ աղքատութեամբ կորուսել են շատ բաներ, իրենց ձեռքն մնացած էր միմիայն 18,400 տեսնարին հող եւ անտառ. որուն մէկ մասն եւս այժմ չափըշտակեցին Մոլտաւանք. եւ Գատարանն անգամ առաջին դատաւոր նստած է Մոլտաւան: Գատարանատան հայերէն օրենքը վերնայէն զատ լեզուն ալ վերցեր է: Բայց զարմանք չէ. լեզուն քաղաքէն վերցած ժամանակը դատարանի մէջ միքէ պահուելու էր:

Առ հասարակ աղքատ են ժողովուրդը, եւ շատ տեսակ կատարելութենէ զուրկ, հագիւ կան մի տասն զերդաստան միջակ կարողութեամբ, միւսներն կպարտալին այգեպանութեամբ, երկրագործութեամբ, եւ շատերն ալ ցրուած Յանսա Քիշնեւ եւ այլ քաղաքներ, կապրին սափրիչութեան արհեստով: Այսչափ միայն միխրարութիւն կայ այս քաղաքը որ նորահաս երիտասարդներն դուրս քաղաքները շրջելով աչքերն բացուած է, եւ այժմ մեծ հետեւողութիւն ունին իրենց առաջին կաշեւարպարգեւ իրաւունքները ձեռք բերելու: Ս. Լուսաւորչի եկեղեցին տեսի շատ հին խաչեր եւ արձարեղեններ հին յիշատակարաններով կամ առանց յիշատակաւանի. բայց զարմանք է եւ այն սուրբ աւանդն որ կրտսի Ս. Նշան, որ երկարեայ շատ հնաձեւ խաչ մըն է. երեսոյն ցոյց կուտայ որ այս խաչը մեծամեծ փորձանաց հանդիպած է: Թեպէտ եւ խաչին շատ տեղերը կտրած կամ փշրած են, բայց շատ հրաշագործ է, վասն զի տեղւոյն բնակչաց կերպ կերպ հրաշքներ պատմելէն զատ, ամենայն ազգեր, ինչպէս նաեւ Հայք՝ երկար ճանապարհներէ ուխտ կուգան, հիւանդներ կրերեն եւ իրենց հաւատքովը կրվաչելն խաչեցելոյն Աստուծոյ շնորհքն ու ողորմութիւնը եւ կվերադառնան տեղերը:

Այս եկեղեցւոյ մէջ նմանապէս կալանաւանութիւն եւ Պողոս կայսեր տուած Հրովարտակը՝ զարդարուն ոսկեզօծ տուփի մէջ, Ռուսներէն զրած հանդերձ բազմանութեամբ, որ ունի այս օրինակ. . . Աստուծոյ արագահաս ողորմութեամբն մեք Պողոս առաջին Կայսր եւ ինքնակալ ամենայն Ռուսաց... Հաւատարմագունից Հայոց Քրիստոնէական օրինի հասա- . . բակութեան քաղաքին Գրիգորիոսօպոս ամենայն կերպի . . կողմանց ամենեցուն ընդհանրաբար եւ ամենիցն յատուկ . . մերս կայսերական ողորմածագոյն բան . . . ա. Զպահան- . . ջնչ ինոցանէ զըրամս վասն շինութեան տանց եւ խանութ- . . բից, զործեաց եւ վաճառականութեան . . . ք. Վասն աղ-

քառաց շինութեանց 8041 ոտուրի, վասն շինութեան նաեւ . . վանիցն եւ աւագ եկեղեցւոյն . . . Գ Տացի 30 հազար . . տեսերին երկիր վասն Հայոց ըստ Դակլատին որ ի1794, . . նոկտեմբերի 12. յաւելուլ յայնմ նաեւ 30 հազար եւ 400 . . տեսերին մինչեւ ցգետն Տաշլիլ . . . Դ. Նշան քաղաքին . . ըստ նոյն Դակլատին պատրաստել . . . Է. Ի4 յունվարի եւ . . ի19 ապրիլի 1799 ամի հրովարտակօք մերովք վերահաս- . . տատեցեալ զիրաւունս ընդարձակօրէն վարել Հայոց իԿայ- . . սերութեան մերում զգաւանութեանս իւրեանց քրիստոնէա- . . կան օրինի. շինել վանորայս, եկեղեցիս, զանգակատունս . . . կախեալ գոլով միմիայն յիշխանութենէ Հայոց Պատ- . . րիարքին Դուկասոս Էջմիածնի, եւ իփոխանորդէ նորին . . . հաստատելով առ իշատել զհոգեւոր եւ զմարմնաւոր . . անձինս իԱստրախան զՀայոց հոգեւոր Կանցիստօրն լինել . . ինմա նախագահութիւն ունող Արքիմանտրիլ մի, եւ երեք . . դատաւորք յաւագ քանանայից. երկու սեկրետարք (այս- . . ինքն ատենադպիրք) մինն իմասին Հայոց՝ վասն զիտո- . . դաց զլեզուն Հայոց. իսկ միւսն իմասին Ռուսաց՝ յաղագս . . այնց Հայոց՝ որք առաւել տեղեակ են լեզուին Ռուսաց, . . քան Հայոց. եւ չորս զրազիրք վասն զրազրութեան. ենք . . կառավարութեան սմին Կանցիստօրի եղիցին ամենայն . . եկեղեցիք Հայոց եւ ծուխք նոցա . . . Դ. Ունիցին սեպ- . . հական Հայոց իրաւարտն ընտրելով զդատաւորս իծողո- . . վրդեղենէ իւրեանց. զսեկրետարս, եւ զգրագիրս . . . Է. Ար- . . ձակեմք զնոսա յարքունական հարկաց եւ իծառայու- . . րեանց, որպիսի կողմանց եւ իցէ . . . Ը. Ազատ վաճա- . . րականութեամբ արդիւնաւորեցին իծովու եւ իցամաքի . . . Թ. Հրամայեմք ամենայն նախարարաց պաշտպանել . . զայսոսիկ հասարակութիւնս: . . Յամի 1799, եւ ի28 հոկ- . . տեմբերի: — ՊՈԴՈՍ ԿԱՅՍՐ. — Գրաթ Թատարախիւն: 44:

Մայիսի 11. Սրբազան այցելուն մի քանի Ազգային գործեր վերջացնելէն յետքը գնաց Հոգեւոր կառավարութիւնը Հայոց. այն տեղ եւս վճռեց քանի մի եկեղեցական գործեր, վերահասութիւն գործեց եկեղեցական շինութեանց եւ Առաջնորդական այգիին: Գնաց այցելութեան մի քանի երեսելեաց, եւ ապա ուսումնարանը ժողովրդական Գպրոցը տեսնելով խոշաղի դուրեան մէջ զոն չեղաւ Հոգաբարձուն եւ քանանայից, ուստի դառնալով տուն, շուտով իւր կարգադրութիւնք ըրաւ թէ բերանացի եւ թէ զրաւոր, այնպէս որ ապահով ըլլայու է թէ այսուհետեւ պիտի ծաղկի կարելին յառաջադիմութեամբ խեղճ աղքատ մանկանց Հայոց, որոնք յիսունի չափ կզտնուին այն տեղ: Արժանի հրապարակական Ազգային շնորհակալութեան առատաձեռնութիւն Ալեքսան Ալալի, որ ինչպէս կենդանութեան ժամանակը շատ մեծագործութիւններ ըրած էր Սուրբ Աստուածածնի եկեղեցին նորոգելով, նոր ոսկեզօծ խաչկալիս զարդարելով, այլ եւ մօտերս իւր մահուանէն յետքը բողեց օրինաւոր կտակ, որով կաւանդէ 1700 բուպ. արծ. հին ուսումնարանի հրդեհով այրած տունը նորոգելոյ, եւ 1300 բուպլիի շանեցողութեամբը նորա տարեկան ներական պիտոյից մէկ մասը հոգալ:

Ի 12 մայիսի Սրբազան Այցելուն խնդրեց զարդարել Լուսաւորչի եկեղեցւոյ Սեղանը, դնելով մէջ տեղը սուրբ Նշանը եւ բոլորը միւս մասուքները, մատոյց փառաւոր հանդիսիս իւր ուխտական պատարագը: Վայելուչ քարոզի-

օրհնեց զժողովուրդը, քաջակերելով զնոսա յԱստուածաշատուրին եւ իրարեզործութիւն. եւ Ազգասիրութեան յորդորներով իւր հրաժարական ողջոյնը տալով, կնքեց Քարոզը. իսկ Սուրբ Պատարագէն յետոյ հանդիսաւոր խաչուայիս կատարեց իւր ուխտը:

Այս քաղաքիս մէջ բաց իմեր տանուտեր Ազնուական Սարովին, որոնք քանի եղբարք են եւ երեսնի կալուածատեարք, կան Քասապեան եղբարք Աղա Օգսենտիոս, Ղուկաս Աղա եւ Բարեկ Աղա, Ասլանեան Մկրտիչ Աղա, Ծարուկեան Յովհաննէս, Շահինեան Յովհաննէս, Քեօսեանք Մկրտիչ եւ Կարապետ. Գեօրգեան Մինաս եւ Բորովեան Յովհաննէս, որոնց նա եւս Սրբազան Առաջնորդը պատարագէն ետքը երկար խորհրդածութիւններ ընելով՝ զկնի ճաշուն ուղեւորեցանք դեպ յՕտեսա. այն օրը Գիւրասթի քաղաքէն անցնելով միւս օրը հասանք Օտեսա:

Օտեսայի երեսկեաց այցելութեան մէջ այս անգամ չեմ կարող մոռանալ այն արժանաւոր խօսքը Նոր Ռուսաստանի զխաւոր կուսակալին, որ իւր ժողոված քիչ աւուր մէջ տեղեկութիւններէն, ասաց Սրբազան Առաջնորդին քե՛ս, ինչպէս Կովկասեան կողմերը ծանօթ եմ Հայոց բարեբարոյ եւ զովկի բնաւորութեանց, այնպէս եւ այս կողմերուն համար, շատ ուրախ եմ որ ինձ Պետրապոլի կուսակալը յատենց քե՛ս այն համանգին մէջ բեպետ Հայոց բիւր համեմատելով այլոց ազգաց նետ շատ քիչ են, բայց ըստ մեծի մասին համբաւաւոր՝ հարուստ կալուածատեարք եւ վաճառականք են, ամենայն կատարելութեամբ զովութեան արժանի ժողովուրդը: Նոյն իսկ խօսքը հաստատեց Սրբազան Առաջնորդը պատմելով իւր ճանապարհորդութիւնը, եւ համատեա անցնելով ինչպէս նախնի Հայոց բողած մեծագործութիւնքը զոր տեսանք, նոյնպէս եւ ներկայ ժողովրդոցը ջերմեռանդութիւնը, ազգասիրութիւնը, եւ ունեց եւս ազգային բարեբարութիւնքը, ինչպէս հաճոցեալ Ալեքսանեանի կտակը, Զաքարեանց եկեղեցի շինելը, Բորովիչի առատաձեռն նուիրատուութիւնը Խալիպեան Ռուսամարտին, եւ այլն: Նորին գերազանցութիւնը Տէր Քօցեպու շատ ուրախութեամբ խոստացաւ կատարել մի քանի միջնորդութիւնք Առաջնորդին, որոնք կվերաբերին Ազգային յառաջադիմութեան, ինչպէս Գրիգորուպոլի Հայոց մի քանի կորուսած արտօնութիւնքը ձեռք բերելոյ համար, Բիշնեի կալուածոց նորոգութեան համար Տէրութեան վերաբերեալ բոլորատուութիւնքը. եւ յետ արժանաւոր պատուասիրութեանց հրաժարեցաւ:

Հնութեան բանգարանի տեսուչ Մուրգաքեւիչի այցելութեան ժամանակը Սրբազան Այցելուն ընկալաւ նուէր մի Մատեան նոր մամուլէն ելած Գ. հատոր Աշխատասիրութեան ընկերութեան Հնագնութեան, եւ սիրով յանձն առաւ կատարել տանուսիրոջ մի առաջարկութիւնը՝ այն է, տալ օրինակել եւ բազմանել Փարիզեան Համաշխարհական հրնութեան բանգարանի մատենադարանի մէջ գտնուած մի նետաքրքրական մատեն, որ այժմ միայն կայտնուի Ռուսմանական աշխարհին, այսպիսի վերնագրով՝ *Բողոքք Հայ եպիսկոպոսաց Թեոդորոյ առ Պապին Հռովմայ վասն անկախութեան յոնութեանց Հռովմեական Միաբնակեաց առ իդարմուցանել զՀայս ի Հռովմեականութիւն*: Յանկալի է արդարեւ այս մատենի եւ Հայերէն հրատարակումը, ո-

րով կրացուի սկզբնաւորութիւն եւ աղբիւր ձեռքման Հայոց ունեց, իւրեանց հայրենի ուղափառ սուրբ եկեղեցիէն: Սորա վերնագրէն ինչպէս կերեւի, բռնութիւններ շատ եղած է Հռովմեական միաբնակեաց կողմանէ: Նոքա Ազգին բախտական վիճակին ժամանակ, միջոց գտած են որսալոյ զժողովուրդն, որոնց սերունդը եւ ցայսօր կգտնուի Խրիմու քաղաքները հարիւրաւոր գերդաստաններով: Թերեւս շատերն իմերջոյ ցրուած լինին Հայաստանի եւ Տաճկաստանի շատ երկիրներն, բայց այս տարակոյտը յիշեալ մատենուց տպագրութեամբը կփարատուի, յորում կկարդաք նաեւ այլ տեղերու Հայոց մէջ Հռովմեականութեան ծագումը:

Հայկազն իշխան կենազ Արդուրինսքիին այցելութիւնը կատարուեցաւ մի քանի Ազգային խնդիրներու վախճան տալով. որոց մէկն էր Օտեսայի Հայոց եկեղեցւոյն զանգակ կախելն, որ ցայսօր չունէր: Այս բանիս վրայ Գերապետիս Առաջնորդը Ազգային ժողովք եւս ընելով՝ առաջարկեց որ մեջերինն ստակ հաւաքին որով պէտք եղած զանգակները բերուին. յետոյ Ռուսմարտանի բարեկարգութիւնն եւս հողաց:

Նոյն օրը զկնի ճաշուն մեր հրաժարական ողջոյնը տալով՝ Օտեսայէն փութացանք նաւաճանգիստը եւ մտանք նոյն իսկ *Միհրդատ* անուն շոգենաւը, որով եկած էինք:

Ծովը հանգարտ, օդը սարգ, ուստի եւ ճանապարհորդութիւնը շատ զուարճալի: Հասաւ գիշերը լուսնկային 13 էր, երկինքը սպարզ, ուստի նստելով բաւական ժամանակ վերին զստիկոնը զուարճացայ բնութեան առատաձեռնած տուրքովը, եւ անս միտքս եկաւ իմ ճանապարհորդութեան տխուր առարկաները եւ յախշտակեց ինձէն զուարճութիւնքս, վասն որոյ առանձնացայ իմ ննջարանս եւ շատ խորհրդածութիւններէս յետքը առի ձեռքս գրիչն ու Աշխարհագրութեան տախտակը, եւ սկսայ հաշիւ տեսնել վիճակագրական եւ քաղաքական տեսութեանց վերայ հետեւեալ զաղափարս.

Պետրապոլի Նանգեի 29,565 քառակուսի վերստ տարածութեան վերայ բնակող Ռուսաց Կալիցիոյ Մոլոգոսիաներուն, Մօլտաւանաց, Պուլդարաց, Շվետաց, Հրէից, Պուլդար եւ Գերմանացի կալօնիստաց եւ Յիզանաց մէջ որոնց բիւր կհասնի 890,865 հոգիք, ինչ նշանակութիւն կարող էին ունենալ 300ի չափ Հայք, այս օտար հողին մէջ ցիր եւ ցան եղած, լեզուն կորուսած, ազգային շատ տեսակ բնաւորութեանն զրկուած: Քրիստոնէից 835 եկեղեցեաց մեջէն, հարկաւ վեցը հազիւ Հայոցը կլինէր: Բայց ճշդիւ հաշուելով եւ Հրէից բիւն եւս հանելով մեջէն երեսեցաւ որ երէ միւս ազգերը հազար հոգւոյ համար ունին մի եկեղեցի, Հայք աւելի կրօնասեր են որ առ իւրաքանչիւր հինգ հարիւր հոգի ունին մի եկեղեցի: Երէ 1171 զիւղօրէիցն 60-ի չափ են Հայ կալուածատեարք սեպհականութիւնք, հարկաւ այս մի առանձին խնամքն է վերին Տաշուրեան: Երէ այն սակաւաբիւ Հայոց մէջ, ունիմք այնպիսի ականաւոր Պայազատ իշխանք ինչպէս Յովհաննէս Մուրատ Պէյ, Գրիգոր Յիւրատ Պէյ, Տէրութեան Աստիճանաւորք, Կալուածատեարք եւ վաճառականք, ինչպէս Զաքարեանք, Յոհաննէսք, Անուշեանք, Ուրֆալեանք, Կոյլուեանք, Բորովեանք, Պալեօեանք, Զօլագեանք, Չերքեզեանք, Խուտալբերեանք եւ այլ բազումք, այն փառք են մեզ եւ ասացոյց Հայոց

մեծահանձար, խորագետ եւ հեռատես հոգւոյն: Երէ Պետարապիոյ եօրն քաղաքացի երկուքին կամ երեքին քաղաքագլուխը տեսանք Հայ վաճառականք, ուրեմն հարկաւոր չէ Հայոց տնտեսականութեան եւ քաղաքականութեան մէջ առաջաւոր լինելուն վերայ տարակուսիլ: Պետարապիոյ վաճառականութիւնը որ երկու կարգ է, այսինքն ներքին եւ արտաքին. առաջինը Ռուսաստանի ամենայն նահանգացիներ. երկրորդը Մօլտաւիոյ եւ Աստրիոյ նեո Նովոսելցայի եւ Սկաւեանի վերայով, նոյնպէս եւ Պենտերի վերայով Օտեսայի նաւահանգստէն Գնեսքրայի վերայ բանած նաւերով կնասցրնէ իւր արդիւնաւոր վաճառականութիւնը եւրոպայի շատ տեղեր. որուն գլխաւոր աղբիւրն է, նախ տեղւոյն անասունքը, որոց մէջ ականաւոր է Պետարապիոյ եւ գինքը, նմանապէս եղ. կաշի, մազ եւ բուրդ. ձկնեղէն եւ ձկան ճարպ. եւ երկրորդ երկրին բոյսը, ինչպէս շատ առատ գինի, որոյ վերաբան 10 կոպ. տալուն մենք ականատես եղանք. ցորեան, գարի, վարսակ, եգիպտացորեան, հաճար, ձուար, նմանապէս շատ տեսակ ծառի եւ պարտեզի պտուղք եւ փայտք, որոնց համար մեծ տոնավաճառներ կլինի Քիշնեւ եւ Պեյք քաղաքները: Այս վաճառականութեան մէջ չնայելով սակաւաբիւ լինելուն, անուանի է Հայը, եւ իւր բնական հանձարով որ միայն տեք է նա մեծագումար բարութեանց իւր կալուածքներէն եւ այգիներէն եւ կապալաւ իւր ձեռքն ունեցած հողերէն, այլ եւ նա շատ տեղեր կնասցնէ վաճառականութեամբ Աստուծոյ պարգեւած այն բարութիւնքն:

Աչքս բացի առաւօտն ու նաւահանգիստը մեկէն տեսի: Հրաման առի Սրբազան Առաջնորդէն հրաժարել իրմէն եւ պատորիոյ նաւահանգստէն ելնել ցամաք եւ գնալ Սիմֆերոպոլ: Երեք օր միայն մնալով՝ Գալստեան տօնը կառարեւով Սիմֆերոպոլ, միւս օրն փութացայ ի Թեոդոսիա:

Թեոդոսիոյ անցնալ եւ ներկայ վիճակի նկարագրութիւնը կրողում քնդ կարգալ նոյնպէս միւս գրութեան մէջ, բայց մեկ համառօտ տեղեկութիւն տալով՝ կենդրեմ քնդ առ ժամանակ մի գոն լինել անով: Այս քաղաքը իւր առանձին բազմամարդութիւնը կորոյս շատ անգամ. ի վերջոյ յետ վերջին պատերազմին Խրիմու համարեա քէ անշքացաւ. եւ իւր բազմամարդութիւնը կորոյս եւ իսպառ. լքեալ մնաց: Նորա վաճառականութեան կապը յալիշտակած էին Կիւրք եւ Պերտեանք քաղաքները: Բայց որովհետեւ այս ցամաքիկոյն արեւելեան կողմը առաջին նաւահանգիստն է շատ տեսակ բարեմասնութեամբ, Ռուսաց Տերութիւնը բարեմանցաւ 1858-ին այս քաղաքէն շինել երկաթուղին Խրիմու եւ Ռուսիոյ: Երկաթուղւոյն սկսածին նեո կարճ ժամանակի մէջ երեքպատիկ աւելացաւ բնակչաց թիւը, մեծամեծ շինութիւններ սկսան կանգնել, եւ բոտ ամենայնի քաղաքը զարդարել, այնպէս որ ամենայն Հայ կապասեր որ Թեոդոսիոյ Հայոց առաջին քառասուն եկեղեցեաց գոնէ կեսը վերանորոգին եւ կանգնեն: Այս յուսով ինքն իսկ Կայսրը բարեմանցաւ Ռուսաստանի Հայոց Առաջնորդական Աբրոն եւ Ատեանն Քիշնեան տեղափոխել ի Թեոդոսիա: Այս

յուսով հարիւրաւոր զաղդիացի գերդաստանք զաղբեցին ի Թեոդոսիա: Այս յուսով Թեոդոսիոյ ժողովուրդը իրենց կարողութեան մեծ մասը տունին քարի եւ փայտի մեծամեծ շինութիւններով քաղաքը կրկնապատիկ մեծացուցին եւ շրջակայ ընդարձակ լեռները եւ դաշտերը այգիներով եւ պարտեզներով ծածկեցին: Եւ այն իսկ յուսով մեծանուն իշխանն Խալիպեան այն տեղ շինեց իւր հոյակապ Ազգային մեծագումար ծախքաւ կանգնած Ռուսմնարանը: Բայց այս յոյսը խիստ կարճօրեայ եղաւ, այնպէս որ միլիոնաւոր ծախքեր գնալէն եւ եօրանասուն վերստի չափ ճանապարհը շինուելէն յետքը՝ յանկարծ դադարեցաւ շինութիւնը եւ նորա նեո Թեոդոսիոյ այն արագընդաց յառաջադիմութիւնը: Բայց Աստուծոյ յաջողելովը այս օրերս նոր ընկերութիւն մը կազմուեցաւ յմեզդիացւոց, որ տերութեան մասնաւոր արտօնութիւններովը քաջալերուած պիտի վերստին սկսի Թեոդոսիոյ երկարաւոյլն:

Խալիպեան Ռուսմնարան Ազգիս Հայոց, որոյ գլխաւոր Խնամակալք եւ Հոգաբարձուք են նորա բազմերախտ Հիմնադիրք Խալիպեան Աղա Յարութիւն մեծանուն իշխանը, եւ Սրբազան Առաջնորդ Տէր Գաբրիէլ Նալբազոյն Վարդապետ Ալվազեան, ինչպէս յայտնի է ընդերքողաց իւր ժամանակաւոր բնակութիւնէն, անցնալ տարի սեպտեմբերի 8-ին հանդիսաւոր նաւակատեօք գետեղեցաւ իւր նոր բնակութեանը մէջ, ուր կուսանին 150-էն աւելի աշակերտք, որ անշուշտ Ազգային լուսաւորութեան միակ Աղբիւրն կհանդիսանայ Ազգիս մէջ, օր աւուր բարեկարգութեամբ զնադրելի, որով եւ կարող է ճակատարաց ապահովել Ազգին իւր յարասնութիւնը եւ յառաջադիմութիւնը անխոնջ հոգացողութեամբ իւր բարեբար հիմնադրաց: Այս Ռուսմնարանն է միակ զարդ եւ պայծառութիւն քաղաքիս: Թէ եւ բաց սակից Թեոդոսիա ամառուան չորս ամիսները մեծ մեծ բազմութեամբ կլեցվի Ռուսաստանի շատ կողմերու մեծամեծներովը, որոնք կժողովին այս տեղ ծովը լուսացուելու:

Ռուսմնարանին շինութեան պատմութիւնը, նորա ներքին եւ արտաքին բարեկարգութիւնքն ու կանոնները լիովին պիտի կարգաս Դաւրիկոյ ստորագրութեան մէջ:

Իմ այս տեղ գտնուած միջոցս՝ շատ ճանապարհորդք այցելութեան եկան Ռուսմնարանին, որոց մէջ էին նաեւ նոր Ռուսիոյ եւ Պետարապիոյ Ընդհանուր Կուսակալ՝ Կոցեպու, Կառավարիչ Սինկլիտոսին, Ներգործական Գաղտնի Խորհրդական՝ Կազնաչէյնով, Նախկին ընդհանուր կուսակալ Քուրայիտու՝ Կոլուպեակին, Նովապետ Պանանորդաց Սեանժովու եւ Կուսակալ Նիքոլայեւիքի նահանգին՝ Կլազինաւի, որոնք տեսնելով առ հասարակ Ռուսմնարանի բարեկարգութիւնքը, մեծ ուրախութեամբ յայտնեցին իրենց գոհութիւնը:

Անա, բարեմիտ ընդերքող, Հայոց Ազգին Ռուսաստանի քանի նահանգաց մէջ ցրուած ժողովրդոց համար մի համառօտ տեղեկութիւն: Երէ գտնիս այս գրութեան մէջ գանցաւորութիւն, ներքին ինձ կամ տկարութեանս տալով եւ կամ կարճ ժամանակի մէջ այսչափ տեղեկութիւն հազիւ քաղելոյս:

ԱՅՈՒԳ՝ ՔԱՆ. Յ. ՍՈՒՐԵՆԵԱՅՑ.

